

ների, ջերմեռանդ և աշխատասէր արհեստաւարների, երկրագործների, համեստափայլ տիկիների, պարկեշտասուն օրիորդների, տղամարդկանց, կանանց, ծերերի, երիտասարդների և մանուկների և ամենայն մեծ ու փոքրների անունով՝ թեմի առաջնորդ Տ. Մատթէոս Տ. վարդապետ Ինճէեանին եպիսկոպոսական ստորճան տալու մասին. այլ և յորդորուեց, որ առաջնորդ նորապսակ Տ. Մատթէոս եպիսկոպոսին օգնութիւն և աջակցութիւն ցոյց տան, որ նորա գործունէութիւնը արդիւնաւէտ լինի յօգուտ ազգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ, 24 դեկտեմբերի, թ. 2089:

ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳԻՐԵՐԻՅ ՔԱՂԱՒԱՅՆԵՒ

2 դեկտմ., թ. 661. Սինօզր օրոշեց. պատուիրել Վրաստանի Հ. Կոնսիստորիային Կանձակում գտնւող Երուսաղէմապատկան 2 կրպակների տարեկան կապալաւորքը 47 ու 20 կոպ. ստանալ տեղի Հոգևոր Կառավարութեան միջոցով և ուղարկել Երուսաղէմի Հայոց պատրիարքին, իւրաքանչիւր անգամ այդ մասին տեղեկացնելով Սինօզին:

2 դեկտմ., թ. 662. Սինօզր՝ քննութեան առնելով Տաթևի Հ. Կառավարութեան քարտուղարի դէմ եղած բողոքների և վանքի կալուածական հաշիւների, վերաբերեալ գործը, որոշեց. հաստատել Սինօզի 1913 թ. նոյեմբ. 15-ի որոշումը, որով Հ. Կառավարութեան քարտուղար Պետրոս Տէր-Յարութիւնեանը հեռացուած է պաշտօնից և նրա տեղ կարգուած է նոյն Կառավարութեան ծառայող Տիգրան Սազանգարեանը:

2 դեկտմ., թ. 669. Սինօզր՝ քննութեան առնելով Կարալագեազի գաւառի Աթուր գիւղի Մկրտիչ քհն. Ստեփանեանի և Ազար քհն. Տէր-Ազարեանի մեղադրական գործը՝ զինուորակոչ ատեանին կեղծ վկայական տալու մասին, որոշեց. կարճել այս գործը Սինօզում, ի նկատի ունենալով, որ զինուորական ատեանն արդէն այդ մասին յայտնել է նահանգական դատարանի դատախազին ի տնօրինութիւն:

4 դեկտմ., թ. 672. Սինօզը՝ քննութեան առնելով Գեօքչայի գաւ. Բզովանդ գիւղի ընծայացու Անդրէաս Գրիգորեանցի ձեռնադրութեան գործը, և գտնելով, որ նրա՝ Սաղեանի Բուդաղեան վանական դպրոցից ստացած վկայականը անբաւարար է, և, միւս կողմից, նա անչափահաս է (ծն. 1892 թ.), որոշեց մերժել նրա խնդիրը քահանայ ձեռնադրելու վերաբերմամբ:

4 դեկտմ., թ. 573. Սինօզը՝ Շամախու Հ. Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց, պատուիրել Շամախու Կոնսիստորիային ընդունել հայ եկեղեցու ծոցը հրէայ Բագուարնակ Բենիամին Ռիտտներբրգին և մկրտել նրան հայ եկեղեցու ծիսով:

4 դեկտմ., թ. 674. Սինօզը՝ երևանի նահ. դատարանի դատախազի առաջարկութեամբ քննութեան առնելով Հին Նախիլևանի գաւ. Սուլթանրէզ գիւղի ծխատէր Համբարձում քհնյ. Տէր-Ղազարեանի մեղադրական գործը, և գտնելով, որ յիշեալ քհնյ. Պօղոս Գուլոյեանին՝ ղինուորատեանին ներկայացնելու համար, տուել է կեղծ վկայական նրա որդու մահուան մասին, վերջնի կենդանութեան ժամանակ, որոշեց, յայտնել նոյն դատախազին կարծիք, որ մեղադրուող քհնյ. յանցաւոր է պատժ. օր. 362-րդ յօդուածով:

4 դեկտմ., թ. 671. Սինօզը՝ քննութեան առնելով Չերնոմոր. նահան. Պոտխրերտովայ և Բագնի աւանների ծխատէր Բեթղեհէմ քհնյ. Տէր-Բարեղամեանի մեղադրական գործը՝ մի շարք ծննդեան կեղծ վկայականներ և քաղուածներ տալու մէջ, որոշեց, պատուիրել Աստրախանի Կոնսիստորիային յիշեալ քահանայի կեղծիքների գործը յանձնել մարմնաւոր իշխանութեան գատին, իսկ նրան դադարեցնել քահանայագործութիւնից մինչև գատի վախճանը:

11 դեկտմ., թ. 680. Սինօզը՝ վեհափառ Կաթողիկոսի մակագիր պատուէրի համաձայն, որոշեց, պատուիրել Վրաստանի թեմի Առաջնորդին 1) թեմի վանքերի յաւելեալ գումարները պահել այդ վանքերի անունով որ և է

գրամատան. 2) առանց Սինօզի հաճութիւնն առնելու մի վանքի գրամները չծախսել մի ուրիշ վանքի նորոգութեան վրայ, և 3) վանքերի համար անելիք իւրաքանչիւր նորոգութեան համար դիմել Սինօզ, ներկայացնելով վերանորոգութեան նախահաշիւ:

13 դեկտմ., թ. 679. Սինօզը՝ լսելով Գանձասարի երկանաքարի հանքի կապալատութեան գործը, որոշեց. հաստատել Մ. Աթ. կալուածոց կառավարչի կապած նօտարական պայմանը, որով յիշեալ երկանաքարի հանքը տրուած է կապալով 5 տարի ժամանակով տարեկան 1700 ռուբլով Գանձասար գիւղացի Աբրահամ-բէգ Հասան-Չալալեանին:

16 դեկտմ., թ. 690. Սինօզը՝ Հօգ. Գործ. Դեպարտամենտի առաջարկութեամբ քննութեան առնելով Ռուսահայ կոնսիստորիաներում գործավարութեան մէջ եղած թղթերից ուստերէն թարգմանութեամբ պատճէններ տալու խնդիրը, որոշեց. յայտնել նոյն Դեպարտամենտին, որ Սինօզը ինչպէս և Ռուսահայ կոնսիստորիաները՝ որպէս կոչւելեալ հաստատութիւններ, առաջնորդուած են Օր. II հատ. 131-րդ յօդուածով, որի համաձայն հաստատութիւնները գործավարական թղթերից տալիս են միայն պատճէններ, թողնելով թարգմանութիւնը կողմերին:

18 դեկտմ., թ. 707. Սինօզը՝ զննութեան առնելով տպագրութեան և տառերի գիւտի մեծ յորելեանները կատարող Յանձնաժողի հրատարակչական մասնաժողովի ծախուց մատեանը, որոշեց. ընդունել և հաստատել նոյն մասնաժողովի արած ծախսերը ընդամենը 1322 ռ. 56 կոպ., որից 790 ռ. ծախսուած է «Երոզակաթ» գիտական ժողովածուի հրատարակութեան վերայ, 421 ռ. 50 կոպ. վճարած է ս. Սահակի և Մեսրոպի նկարներին, 53 ռ. «Մեծ Յորելեանը» բրոշիւրի ծախք, և այլն: